ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

7 օգոստոսի 2017թ. թիվ 133

Լ.ՃԻՃԻԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հաշվի առնելով Լ.Ճիճիլյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեոնիկ Ճիճիլյանին տրամադրել 2017 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը ս/թ օգոստոսի 14-ից մինչև սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. Լ.Ճիճիլյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Լուսինե Ներկարարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. օգոստոսի 7
ք.Վանաձոր